ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031 vardenismer@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ՕԳՈՍՏՈՍԻ 2019թվականի N 91-Ա

ՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻ ՇԱՐՔ ՄՐՑՈՒՄՆԵՐՈՒՄ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ՑՈՒՑԱԲԵՐԱԾ ԵՎ ՄՐՑԱՆԱԿԱՅԻՆ ՏԵՂԵՐ ԳՐԱՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ ԽՐԱԽՈՒՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Սոցիալական աջակցության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի դրույթներով, <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 5-րդ կետով՝ համայնքի ավագանին որոշում է.

1.Համահայկական 7-րդ խաղերի մրցումների ընթացքում բազկամարտի մրցումներին առաջին և երկրորդ պատվավոր տեղերը գրավված Վարդան Դավիթի Խաչատրյանին խրախուսել 50.000 (հիսուն հազար) ՀՀ դրամ:

2. Համահայկական 7-րդ խաղերի մրցումների ընթացքում շախմատի մրցումներին լավագույն արդյունք ցուցաբերած Մարգարիտ Հենրիկի Պետրոսյանին խրախուսել 15.000 (տասնհինգ հազար) ՀՀ դրամ:

3.Համահայկական 7-րդ խաղերի մրցումների ընթացքում լավագույն արդյունք ցուցաբերած Նաիրի Արշակյանին, Լևոն Առուստամյանին և Սամվել Ղազարյանին խրախուսել 10.000-ական (տասը հազար) ՀՀ դրամ:

4. Տարեցների հանրապետական խաղերի 2- րդ փուլում շաշկի մարզաձևում 2-րդ պատվավոր տեղը գրավելու համար Մուրադ Նալբանդյանին խրախուսել 15.000 (տասնհինգ հազար) ՀՀ դրամ:

5. Հունահռոմեական ըմբշամարտի աշխարհի առաջնությունում լավագույն արդյունք ցուցաբերած Տիգրան Մինասյանին խրախուսել 50.000 (հիսուն հազար) ՀՀ դրամ:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԲԱՐՍԵՂՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍԻՄՈՆ

ԵՐԱՆՈՍՅԱՆ ՀԱՅԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ՄԵՍՐՈՊ

ՄԱԼՈՅԱՆ ՀԱՅԿԱԶ

ՄԻՆԱՍՅԱՆ ԱՐԱՄ

ՇԱԲՈՅԱՆ ՄՈՒՇԵՂ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՀԱԿՈԲ

Կ.Տ. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՄ ՄԵԼՔՈՆՅԱՆ